



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

АГЕНТСТВО ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

ОФИЦИАЛЬНЫЙ
БЮЛЛЕТЕНЬ

№ 8

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Սույն տեղեկագրում
գետեղված տեղեկությունները
համարվում են հրապարակված 2014 թվականի օգոստոսի 25-ից

● Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՅՈՒՏԵՐ	4, 99
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	6, 101
ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ	8, 103
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	10, 105
ԱՐԴՅՈՒՆԱՔԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ.....	12, 107
<i>Տեղեկություններ գրանցված արդյունաբերական նմուշների մասին</i>	14, 109
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	15
<i>Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին</i>	17
<i>Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին</i>	90
ՑՈՒՑԻՉՆԵՐ	92
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	94
ԵՐԿՏԱՌ ԿՈԴԵՐԸ	110

Հրատարակվում է Մտավոր սեփականության
գործակալության կողմից 1995թ.

0010, Երևան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. (011) 597-537 հայտերի ընդունման բաժին
Հեռ. (011) 597-535 տեղեկատվական-
տեխնոլոգիական ապահովման բաժին

Издается Агентством интеллектуальной
собственности с 1995г.

0010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
Тел. (374 11) 597-537 отдел приема заявок
Тел. (374 11) 597-535 отдел информационно-
технологического обеспечения

СОДЕРЖАНИЕ

ИЗОБРЕТЕНИЯ.....	4, 99
Сведения о выданных патентах.....	6, 101
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ.....	8, 103
Сведения о выданных патентах.....	10, 105
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ.....	12, 107
Сведения о зарегистрированных промышленных образцах.....	14, 109
ТОВАРНЫЕ ЗНАКИ.....	15
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	17
Сведения о продлении действия регистрации товарных знаков.....	90
УКАЗАТЕЛИ.....	92
СООБЩЕНИЯ.....	94
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ.....	110

CONTENTS

INVENTIONS.....	4, 99
Information on granted patents.....	6, 101
UTILITY MODELS.....	8, 103
Information on granted patents.....	10, 105
INDUSTRIAL DESIGNS.....	12, 107
Information on registered industrial designs.....	14, 109
TRADE MARKS.....	15
Information on registered trade marks and service marks	17
Information on renewal of effect of trademark registration	90
INDEXES.....	92
REPORTS.....	94
TWO-LETTER CODES.....	110

ԳՅՈՒՏԵՐ

Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

- 11** *արտոնագրի համարը*
- 13** *փաստաթղթի տեսակի կոդը*
A գյուտի արտոնագիր
B արտոնագրառունակության մասին եզրակացություն
- 21** *հայտի համարը*
- 22** *հայտի ներկայացման թվականը*
- 23** *ցուցահանդեսային առաջնության թվականը*
- 31** *առաջին հայտի համարը*
- 32** *առաջին հայտի ներկայացման թվականը*
- 33** *երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը*
- 45** *գյուտի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
- 51** *միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)*
- 54** *գյուտի անվանումը*
- 56** *տեղեկատվության աղբյուրներ*
- 57** *գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը*
- 62** *ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը*
- 71** *հայտատուն, երկրի կոդը*
- 72** *գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը*
- 73** *արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը*
- 74** *արտոնագրային հավատարմատար*
- 85** *միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը*
- 86** *միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը*
- 87** *միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը*

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

- (51) **(2014.01)** (11) **2866** (13) **A**
B02C 23/00
 (21) **AM20130012** (22) **08.02.2013**
 (71) «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ (AM)
 (72) Արամայիս Մյասնիկի Եսոյան (AM), Անի Անդրանիկի Մաթևոսյան (AM), Մանվել Ավետիքի Ալավերդյան (AM)
 (73) «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ, 0009, Երևան, Տերյան 74 (AM)
(54) Կարտոֆիլահանի ռոտացիոն կոշտաջարդիչ
 (57) Կարտոֆիլահանի ռոտացիոն կոշտաջարդիչը կազմված է տնուց, կարտոֆիլահանի հետ միացման լծակներից, տնու վրա հավաքված տարբեր տրամագծերի օղագոտիներից, դրանց միջև տեղադրված տափօղակներից, մակերևույթի նկատմամբ դիրքի կարգավորման հարմարանքից: Մարգարթմբի վրա նստող օղագոտիների վրա, կարտոֆիլահանի շարժման ուղղության նկատմամբ անկյան տակ տեղադրված են հողի մեջ խորացման կարգավորման հնարավորությամբ կիսաշերտփատիպ աշխատանքային օրգաններ:

Ապահովվում է մարգարթմբի մակերևույթի կոշտերի ջարդում և կողիեռացում, լավանում է պալարների զատումը, բարձրանում է ագրեգատի արագությունը և արտադրողականությունը, նվազում են էներգիական ծախսերը, 3 նկ.:

- (51) **(2014.01)** (11) **2867** (13) **A**
F24H 6/00
 (21) **AM20130076** (22) **30.05.2013**
 (71) Հենրիկ Գևորգի Մխիթարյան (AM), Վահե Հրանտի Մխիթարյան (AM), Հրանտ Հենրիկի Մխիթարյան (AM)
 (72) Հենրիկ Գևորգի Մխիթարյան (AM), Վահե Հրանտի Մխիթարյան (AM), Հրանտ Հենրիկի Մխիթարյան (AM)
 (73) Հենրիկ Գևորգի Մխիթարյան, 0029, Երևան, Սիլիկյան թաղ. 7-րդ փող. 23 (AM), Վահե Հրանտի Մխիթարյան, 0029, Երևան, Սիլիկյան թաղ. 7-րդ փող. 23 (AM), Հրանտ Հենրիկի Մխիթարյան, 0029, Երևան, Սիլիկյան թաղ. 7-րդ փող. 23 (AM)

(54) Օդի հոսքի առաջացման և ջրի տաքացման համալիր կայանք

(57) Գյուտը վերաբերում է էներգետիկայի բնագավառին, մասնավորապես՝ էներգիայի բնական աղբյուրներն օգտագործող կայանքներին, և կարող է կիրառվել հատկապես արևադարձային երկրներում:

Կայանքն ունի հորիզոնական հարթության նկատմամբ թեք տեղակայված տաք օդի հոսքի մուտք և սառն օդի հոսքի ելք ունեցող թունելախորշ, թունելախորշի մեջ տեղադրված սառը ջրի հոսքի մուտք և տաք ջրի հոսքի ելք ունեցող զիգագազան խորսխային ջերմափոխանակիչ, սառը ջրի ջրամբար և տաք ջրի հավաքման բաք, որոնք խողովակներով միացված են ջերմափոխանակիչի մուտքին ու ելքին: Թունելախորշի ծածկն ունի սև գույնի արևային ջրատաքացիչ, իսկ թունելախորշի ելքը՝ նեղացված հատվածամաս: Թունելախորշը և ջերմափոխանակիչը կենտրոնական մասից անկյունաձև կամ կամարաձև բաժանված են երկու հատվածամասերի՝ տաք օդի հոսքի մուտքի ու տաք ջրի հոսքի ելքի հատվածամաս և սառը ջրի հոսքի մուտքի ու սառն օդի հոսքի ելքի հատվածամասի: Արևային ջրատաքացիչը հարթ խորիսխային ջերմափոխանակիչ է և զիգագազան ջերմափոխանակիչին համանման բաժանված է երկու հատվածամասերի, որոնց ստորին ծայրերը խողովակագծով միացված են: Զիգագազան ջերմափոխանակիչի սառը ջրի հոսքի մուտքի հատվածամասը խողովակով վերևից միացված է հարթ խորիսխային ջերմափոխանակիչի հատվածամասերի ծայրերը ներքևից միացնող խողովակագծի կենտրոնական մասին: Կայանքն ունի նաև թունելախորշի տեղադրման մակարդակից վեր տեղադրված ավելի տաք ջրի ընդունման միջանկյալ բաք, որը խողովակագծերով միացված է հարթ ջերմափոխանակիչի հատվածամասերի վերին մասերին և զիգագազան ջերմափոխանակիչի տաք ջրի հոսքի ելքի հատվածամասին: Ջերմափոխանակիչների հատվածամասերը թունելախորշի կենտրոնական մասում միմյանցից առաձնացված են: Ջրամբարը և ջրի բաքերը ջերմափոխանակիչների հատվածամասերին

միացնող խողովակներն ու խողովակագծերն ունեն փականներ:

Մեծացվում են կայանքի հզորությունն ու օ.գ.գ.-ն, բարձրացվում է արտադրողականությունը, 2 նկ.:

-
- (51) **(2014.01)** (11) **2868** (13) **A**
G01R 27/00
 - (21) **AM20140012** (22) **14.02.2014**
 - (71) Բորիս Մամիկոնյան (AM), Խորեն Մամիկոնյան (AM)
 - (72) Բորիս Մամիկոնյան (AM), Խորեն Մամիկոնյան (AM)
 - (73) Բորիս Մամիկոնյան, 3103, Գյումրի, Ն. Շնորհալի 25, բն. 24 (AM), Խորեն Մամիկոնյան, 3103, Գյումրի, Ն. Շնորհալի 25, բն. 24 (AM)
 - (54) **Փայտանյութի դիէլկոմետրական խոնավաչափիչի աստիճանավորման եղանակ**
 - (57) Գյուտը վերաբերում է էլեկտրաչափողական տեխնիկային, մասնավորապես՝ փայտանյութի դիէլկոմետրական խոնավաչափիչի աստիճանավորման եղանակներին:

Խոնավաչափիչի սանդղակը բաժանում են հավասար բաժանմունքների, անհայտ խոնավությամբ փայտանյութից պատրաստում են փորձանմուշ, կշռում այն, որոշում են փորձանմուշի առաջին կշռման զանգվածը (m_1) և չափում են փորձանմուշի սկզբնական խոնավությունը, որը համապատասխանում է աստիճանավորվող խոնավաչափիչի սանդղակի բաժանմունքի որևէ արժեքին (N_1), այնուհետև փորձանմուշը լրացուցիչ խոնավացնում են,

կշռում և որոշում են փորձանմուշի երկրորդ կշռման զանգվածը (m_2), որից հետո աստիճանավորվող խոնավաչափիչով չափում են փորձանմուշի խոնավությունը խոնավացնելուց հետո, որը համապատասխանում է սանդղակի բաժանմունքի այլ արժեքին (N_2): Փորձանմուշում սկզբնական (x_1) ու խոնավացնելուց հետո (x_2) ջրի զանգվածների իրական արժեքները հաշվում են առաջին ու երկրորդ չափումների արժեքներով, հետևյալ բանաձևերով՝

$$x_1 = N_1 (m_2 - m_1) / N_2 - N_1, \quad x_2 = x_1 + (m_2 - m_1) \text{ որտեղ՝}$$

x_1 - ը փորձանմուշում ջրի սկզբնական զանգվածն է (կգ),

x_2 - ը փորձանմուշում ջրի զանգվածն է խոնավացնելուց հետո (կգ),

m_1 -ը փորձանմուշի առաջին կշռման զանգվածն է (կգ),

m_2 -ը փորձանմուշի երկրորդ կշռման զանգվածն է (կգ),

N_1 -ը՝ աստիճանավորվող խոնավաչափիչով փորձանմուշի խոնավության առաջին չափմանը համապատասխանող սանդղակի բաժանմունքի արժեքն է,

N_2 -ը աստիճանավորվող խոնավաչափիչով փորձանմուշի խոնավության երկրորդ չափմանը համապատասխանող սանդղակի բաժանմունքի արժեքն է և փորձանմուշի խոնավության ստացված իրական արժեքներով կատարում են խոնավաչափիչի աստիճանավորումը սանդղակի N_1 և N_2 բաժանմունքներում:

Պարզեցվում է եղանակը և բարձրացվում աստիճանավորման ճշգրտությունը:

**ՕԳՏԱԿԱՐ
ՄՈԴԵԼՆԵՐ**

Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

11	<i>արտոնագրի համարը</i>
13	<i>փաստաթղթի տեսակի կոդը</i> <i>U</i> <i>օգտակար մոդելի արտոնագիր</i>
21	<i>հայտի համարը</i>
22	<i>հայտի ներկայացման թվականը</i>
23	<i>ցուցահանդեսային առաջնության թվականը</i>
31	<i>առաջին հայտի համարը</i>
32	<i>առաջին հայտի ներկայացման թվականը</i>
33	<i>երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը</i>
45	<i>օգտակար մոդելի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը</i>
51	<i>միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)</i>
54	<i>օգտակար մոդելի անվանումը</i>
56	<i>տեղեկատվության աղբյուրներ</i>
57	<i>օգտակար մոդելի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը</i>
62	<i>ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը</i>
71	<i>հայտատուն, երկրի կոդը</i>
72	<i>օգտակար մոդելի հեղինակը (ները), երկրի կոդը</i>
73	<i>արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը</i>
74	<i>արտոնագրային հավատարմատար</i>
85	<i>միջազգային հայտի (PCT) ազգային փուլ փոխադրման թվականը</i>
86	<i>միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը</i>
87	<i>միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը</i>

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) **(2014.01)** (11) **369** (13) **Ս**
A23L 1/00

(21) **AM20140064U** (22) **15.05.2014**

(71) Մխիթար Ավետիսյան (AM), Արամ Նազարյան (AM), Վարդան Յավրույան (AM), Նարինե Հովհաննիսյան (AM)

(72) Մխիթար Ավետիսյան (AM), Արամ Նազարյան (AM), Վարդան Յավրույան (AM), Նարինե Հովհաննիսյան (AM)

(73) Մխիթար Ավետիսյան, 0079, Երևան, Նորքի 5, Մառի 12, բն. 40 (AM), Արամ Նազարյան, 0038, Երևան, Էստոնական 3, բն. 16 (AM), Վարդան Յավրույան, 0012, Երևան, Ա. Խաչատրյան 12, բն. 99 (AM), Նարինե Հովհաննիսյան, 2210, Կոտայքի մարզ, գյուղ Առինջ, Մաշտոցի պող. 4, տուն 6 (AM)

(54) **Բուսական ծագման հավելումով մակարոն**
(57) Օգտակար մոդելը վերաբերում է սննդարդյունաբերությանը, մասնավորապես՝ բուսական ծագման հավելումով մակարոնների բաղադրակազմերին:

Բուսական ծագման հավելումով մակարոնը ներառում է ցորենի ալյուր, ջուր, ֆունկցիոնալ նշանակության սննդային հավելում՝ խաղողի կորիզի փոշի, ցորենի թեփի փոշի, վարսակի ալյուր, բաղադրամասերի հետևյալ հարաբերակցությամբ (զանգվ. %). ջուր՝ 25.5 - 30.5, ցորենի թեփի փոշի՝ 3.6 - 5.7, վարսակի ալյուր՝ 2.3 - 3.5, խաղողի կորիզի փոշի՝ 5.4 - 7.1, ցորենի ալյուր՝ մնացածը:

Ընդլայնվում է մակարոնեղենի տեսականին:

(51) **(2014.01)** (11) **370** (13) **Ս**
A23L 1/00

(21) **AM20140063U** (22) **15.05.2014**

(71) Մխիթար Ավետիսյան (AM), Արամ Նազարյան (AM), Վարդան Յավրույան (AM), Նարինե Հովհաննիսյան (AM)

(72) Մխիթար Ավետիսյան (AM), Արամ Նազարյան (AM), Վարդան Յավրույան (AM), Նարինե Հովհաննիսյան (AM)

(73) Մխիթար Ավետիսյան, 0079, Երևան, Նորքի 5, Մառի 12, բն. 40 (AM), Արամ Նազարյան, 0038, Երևան, Էստոնական 3, բն. 16 (AM), Վարդան

Յավրույան, 0012, Երևան, Ա. Խաչատրյան 12, բն. 99 (AM), Նարինե Հովհաննիսյան, 2210, Կոտայքի մարզ, գյուղ Առինջ, Մաշտոցի պող. 4, տուն 6 (AM)

(54) **Բուսական ծագման հավելումով մակարոն**
(57) Օգտակար մոդելը վերաբերում է սննդարդյունաբերությանը, մասնավորապես՝ բուսական ծագման հավելումով մակարոնների բաղադրակազմերին

Բուսական ծագման հավելումով մակարոնը ներառում է ցորենի ալյուր, ջուր, սոյայի ալյուր, ֆունկցիոնալ նշանակության սննդային հավելում՝ դդմի կորիզի փոշի, բաղադրամասերի հետևյալ հարաբերակցությամբ. (զանգվ. %). ջուր՝ 25,5 - 30,5, սոյայի ալյուր՝ 4,9 - 5,9, դդմի կորիզի փոշի՝ 6,4 - 7,9, ցորենի ալյուր՝ մնացածը:

Ընդլայնվում է մակարոնեղենի տեսականին:

(51) **(2014.01)** (11) **371** (13) **Ս**
A61C 8/00
A61C 13/00

(21) **AM20140039U** (22) **31.03.2014**

(71) Կարեն Լևոնի Գրիգորյան (AM)

(72) Կարեն Լևոնի Գրիգորյան (AM)

(73) Կարեն Լևոնի Գրիգորյան, 0010, Երևան, Վարդանանց 5ա, բն. 352 (AM)

(54) **Լնդի ձևավորիչ**

(57) Գյուտը վերաբերում է ստոմատոլոգիական օրթոպեդիկ սարքերին, մասնավորապես՝ լնդի ձևավորիչներին:

Լնդի ձևավորիչը ունի ատամի իմպլանտատի մեջ ներպտոտակվող ստորին մաս և լինդը ձևավորող վերին մաս: Վերին մասը կազմված է պտուտակային միացումով իրար միակցվող կենտրոնական և փոխտվի կողմնային հատվածամասերից: Ձևավորիչի վերին հատվածամասի վերին ճակատային մակերևույթին կատարված է փորակ, իսկ կողմնային մակերևույթը զլանային է կամ կոնական:

Մեծացվում են ֆունկցիոնալ հնարավորությունները, 5 նկ.:

- (51) **(2014.01)** (11) **372** (13) **U**
B25B 13/00
 (21) **AM20140022U** (22) **13.03.2014**
 (71) Վոլոդյա Արամայիսի Ոսկանյան (AM)
 (72) Վոլոդյա Արամայիսի Ոսկանյան (AM)
 (73) Վոլոդյա Արամայիսի Ոսկանյան, 0005, Երևան, Արցախի 8, բն. 10 (AM)
 (54) **Մանեկադարձակ**
 (57) Օգտակար մոդելը վերաբերում է ձեռքի գործիքներին, մասնավորապես՝ բազմաչափ մանեկադարձակին:

Մանեկադարձակն ունի բռնակ և դրա ծայրամասերին ամրակցված երկուական բազմաչափ մանեկադարձակներ: Բռնակը ծայրերին ունի հավասարանիստ մեկական ուղղանկյուն պրիզմա: Պրիզման նիստերից մեկում ունի գլանաձև խոռոչ, որտեղ տեղակայված է զսպանակած գնդիկ: Բռնակի ծայրերին սևեռված են մեկական ութ մանեկադարձակյա աշխատանքային գլխիկով կցորդիչ, որի իրանի կենտրոնական մասը գլան է, իսկ ծայրերին ունի մեկական չորս աշխատանքային գլխիկներով մանեկադարձակ: Կցորդիչի իրանը կենտրոնական հատվածում և ծայրերում ունի միմյանց համառանցք քառակուսի անցքեր: Կենտրոնական հատվածի վերին և ստորին նիստերում կան մեկական կիսագնդաձև խորացումներ՝ դրանցից յուրաքանչյուրում զսպանակված գնդիկի սևեռման հնարավորությամբ:

Բռնակն իր ծայրերով երկու կողմից կարող է սևեռվել կցորդիչի իրանի կենտրոնական անցքի մեջ: Բռնակին կարող են սևեռվել տարբեր տեսակի մանեկադարձակյա աշխատանքային գլխիկներով կցորդիչներ:

Ապահովվում է տարբեր չափերի և տեսակի մանեկների արտապտուտակման հնարավորությունը, 26 նկ.:

- (51) **(2014.01)** (11) **373** (13) **U**
D01G 15/00
 (21) **AM20140066U** (22) **16.05.2014**
 (71) Նորայր Իսահակի Ղուկասյան (AN)
 (72) Նորայր Իսահակի Ղուկասյան (AM)
 (73) Նորայր Իսահակի Ղուկասյան, 0001, Երևան, Թումանյանի 1-ին անց, շ. 2, բն.7 (AM)
 (54) **Սանդերքա-մանածագործական մեքենա**
 (57) Սանդերքա-մանածագործական մեքենան վերաբերում է մանածագործական արդյունաբերությանը, մասնավորապես՝ տարբեր տեսակի թելքերի, օրինակ՝ բրդի, վուշի, բամբակի կամ դրանց խառնուրդների վերամշակմանը և մանվածքի ստացմանը այդ թելքերից:

Սանդերքա-մանածագործական մեքենան ունի իրանի վրա հաջորդաբար տեղակայված թելքի մատուցման հանգույց, ասեղնավոր դաշտ ունեցող սանդերքող աշխատանքային հանգույց, արտաթող հանգույց, մանածագործական հանգույց և շարժաբեր: Համաձայն առաջարկության, մեքենան լրացուցիչ ունի մանվածքի գրտնակավոր արտածգիչ հանգույց, որը տեղակայված է մանածագործական հանգույցից հետո՝ մանվածքի աշխատանքային շարժի ուղղությամբ: Սանդերքող հանգույցն իրականացված է վերին և ստորին տափակ հարթակների տեսքով, որոնց ասեղնավոր դաշտերն ուղղված են իրար և որոնք ունեն իրար նկատմամբ հետադարձ-առաջընթաց շարժման հնարավորություն՝ ըստ սանդերքվող թելքի աշխատանքային շարժի ուղղության: Վերին և ստորին տափակ հարթակների աշխատանքային մակերևույթները կազմված են լայնական հանովի ձողիկներից, իսկ վերին և ստորին հարթակների ասեղնավոր դաշտերը կազմված են ձողիկների աշխատանքային մակերևույթներին ամրակցված ասեղնավոր դաշտերից:

Բարձրացվում է սանդերքման որակը, կանխարգելվում է ասեղնավոր դաշտերի խցանումն ու թելքի ժապավենի խզումը, 2 նկ.:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
ՆՄՈՒՇՆԵՐ

**Արդյունաբերական նմուշներին վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.80 ստանդարտի**

11	<i>վկայագրի համարը</i>
13	<i>փաստաթղթի տեսակի կոդը</i> <i>S արդյունաբերական նմուշի վկայագիր</i>
21	<i>հայտի համարը</i>
22	<i>հայտի ստացման թվականը</i>
23	<i>ցուցահանդեսային առաջնության թվականը</i>
24	<i>գրանցման թվականը</i>
31	<i>առաջնային հայտի համարը</i>
32	<i>առաջնային հայտի ներկայացման թվականը</i>
33	<i>երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը</i>
51	<i>արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգման (ԱՆՄԴ) ցուցիչը (ները)</i>
54	<i>արդյունաբերական նմուշի անվանումը</i>
55	<i>արդյունաբերական նմուշի պատկերը (գծանկարը, լուսանկարը)</i>
71	<i>հայտատուն(ները), երկրի կոդը</i>
72	<i>հեղինակը(ները), երկրի կոդը</i>
73	<i>իրավատերը(երը), հասցեն, երկրի կոդը</i>
74	<i>արտոնագրային հավատարմատար</i>

Տեղեկություններ գրանցված արդյունաբերական նմուշների մասին

- (51) 11-01 (11) 336 (13) S
 (21) 20140018 (22) 12.06.2014
 (71) Ալեքսան Արզումանյան (AM)
 (72) Ալեքսան Արզումանյան (AM), Հովհաննես Մանուկյան (AM), Արթուր Արզումանյան (AM), Սերյոժա Հակոբյան (AM)
 (73) Ալեքսան Արզումանյան, Գյումրի, Ղանդիլյան 47, բն. 5 (AM)
 (54) **Կախազարդ**
 (55)



1.1



1.2



1.3

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

ТОВАРНЫЕ ЗНАКИ

**Ապրանքային և սպասարկման նշանների վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.60 ստանդարտի**

111	գրանցման հերթական համարը
151	գրանցման թվականը (հանրահայտ ճանաչման թվականը)
152	թվականը, որից սկսած նշանը հանրահայտ է
181	գրանցման գործողության ենթադրյալ ավարտը
210	հայտի համարը
220	հայտի ներկայացման թվականը
230	ցուցահանդեսային կամ այլ առաջնության թվականը
310	առաջին հայտի համարը
320	կոնվենցիայով առաջնության թվականը
330	երկրի կողը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
442	հայտի հրապարակման թվականը
511	ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը
526	չպահպանվող տարրեր
540	ապրանքային նշանը
551	կոլեկտիվ կամ հավաստագրային նշան
554	ծավալային նշան
555	հոլոգրաֆիական նշան
556	ձայնային նշան
591	գույնը և գունային համակցությունը
646	իրավաբանորեն փոխկապակցված այլ գրանցման համարը և թվականը
730	նշանի իրավատերը, հասցեն, երկրի կողը
740	արտոնագրային հավատարմատար

Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին

(210) 20130327 (111) 21688
(220) 18.03.2013 (151) 02.08.2014
(181) 18.03.2023

(730) «Գորշ արջ» ՍՊԸ, Սյունիքի մարզ, ք.
Կապան, Ձորքի 13/13, AM
(442) 17.04.2013
(540)



(526) «ՍՈՒՊԵՐՄԱՐԿԵՏ» և «SUPERMARKET»
բառերն ինքնուրույն պահպանության օբյեկտներ
չեն:
(511)

դաս 35. մանրամեծաձախ առևտուր:

(210) 20130730 (111) 21689
(220) 31.05.2013 (151) 02.08.2014
(181) 31.05.2023

(730) Սոսայրթի օֆ Մենուֆեքչրինգ Էնջինիրս,
Միչիգան Նոն Փրոֆիթ Քորպորեյշն, US
(442) 18.07.2013
(540)



(511)

դաս 16. արդյունաբերական բնագավառի
գրքեր, ամսագրեր, պարբերականներ.

դաս 35. արդյունաբերական բնագավառում
բիզնես կոնֆերանսների և ցուցահանդեսների
կազմակերպում և անցկացում.

դաս 41. արդյունաբերական բնագավառի
առցանց, չներբեռնվող էլեկտրոնային
գրքերի և ամսագրերի տրամադրում.
արդյունաբերական բնագավառում կրթական
ծրագրերի, դասախոսությունների, առցանց
դասավանդման ծառայությունների մատուցում,
սեմինարների անցկացում:
(740) Արարատ Գալոյան

(210) 20130839 (111) 21690
(220) 21.06.2013 (151) 02.08.2014
(181) 21.06.2023

(730) Նանքանգ Ռաբբեր Ռայր Քորպ., ԼԹԴ., TW
(442) 06.09.2013
(540)



(591) Ապրանքային նշանը պահպանվում է
կարմիր և սև գունային համակցությամբ:
(511)

դաս 12. դոդեր. օդախցիկներ.
ավտոմոբիլների դոդեր. օդախցիկներ
օդաճնշական դոդերի համար. գլոցման
մակերևույթներ դոդերի պահպանաչե-
տերի վերականգնման համար. թրթուրներ
տրանսպորտային միջոցների համար. դողա-
ծածկաններ. սահելուց պաշտպանող հար-
մարանքներով դոդեր տրանսպորտային
միջոցների անիվների համար:
(740) Արարատ Գալոյան

(210) 20131054 (111) 21691
(220) 02.08.2013 (151) 02.08.2014
(181) 02.08.2023

(730) Դը ԱԴՖ Ֆեմըլի Ռոսասթ, US
(442) 04.02.2014
(540)



(511)

դաս 14. ազնիվ մետաղներ և դրանց համահավաքներ, դրանցից պատրաստված կամ դրանցով պատված իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. ոսկերչական իրեր, զարդեր, թանկարժեք քարեր. ժամացույցներ և այլ ժամանակաչափ սարքեր.

դաս 25. հագուստ, կոշկեղեն, գլխարկներ.

դաս 35. հագուստի, հագուստի աքսեսուարների, հագուստի դիզայնի, կոշկեղենի, ճամփորդական պայուսակների, ոսկերչական իրերի, էժանագին զարդերի, ժամացույցների, արևապաշտպանիչ ակնոցների, խաղալիքների, անձնական խնամքի պարագանների, մազերի աքսեսուարների, տան համար ապրանքների և ապակյա իրերի, գեղարարության իրերի, թղթի, կաշվե իրերի և պայուսակների մանրածախ վաճառքով զբաղվող խանութների ծառայություններ, երրորդ անձանց (առևտրի միջնորդների) համար ապրանքների և (կամ) ծառայությունների մանրածախ առևտրի բնագավառում շուկայագիտության ծառայություններ՝ համացանցի, կատալոգների (հագուստի և աքսեսուարների վաճառք կատալոգով) միջոցով:

(740) Արարատ Գալոյան

(210) 20131113

(111) 21692

(220) 12.03.2013

(151) 02.08.2014

(181) 12.03.2023

(730) Մեդի Պլուս Թեք Մեդիցինի2-Թեքնիշե Հանդեսագեզելշաֆթ ՄԲՀ, DE

(442) 18.10.2013

(540)

PATRON

(511)

դաս 34. ծխախոտային արտադրանք, մասնավորապես՝ սիգարետներ և զտիչով սիգարետներ (բացառությամբ էլեկտրոնային սիգարետների). ծխելու պիտույքներ. լուցկի:

(740) Ալեքսանդր Նահապետյան

(210) 20131189

(111) 21693

(220) 04.09.2013

(151) 02.08.2014

(181) 04.09.2023

(730) Օենոսենս Ա.Ա.Ր.Լ., FR

(442) 18.11.2013

(540)

ТЕРРАМЯН ԹԵՐՐԱՄՅԱՆ

(511)

դաս 32. զարեջուր. հանքային և գազավորված ջրեր և այլ ոչ ալկոհոլային ըմպելիքներ. մրգային ըմպելիքներ և մրգահյութեր. օշարակներ և ըմպելիքների պատրաստման այլ բաղադրանյութեր. ոչ ալկոհոլային ապերիտիվներ. լիթիումային ջուր. զելտերյան ջուր. սոդայաջուր. ջրեր (ըմպելիքներ). սեղանի ջրեր. կվաս (ոչ ալկոհոլային ըմպելիք). ոչ ալկոհոլային կոկտեյլներ. լիմոնադներ. արախիսի կաթ (ոչ ալկոհոլային ըմպելիքներ). նուշի կաթ (ըմպելիք). սոդա և փոքր քանակությամբ ածխաջրածին պարունակող (իզոտոնիկ) ըմպելիքներ. մեղրի հիմքով ոչ ալկոհոլային ըմպելիքներ. ալոե վերայի հիմքով ոչ ալկոհոլային ըմպելիքներ. կաթնային շիճուկի հիմքով ըմպելիքներ. մրգային ոչ ալկոհոլային ըմպելիքներ. փափկամասով ոչ ալկոհոլային մրգային նեկտարներ. օրշաղ (զովացուցիչ ըմպելիք). զարեջուր. կոճապղպեղի զարեջուր. ածիկի զարեջուր. գազավորված ըմպելիքներ պատրաստելու համար նախատեսված փոշիներ. մոշի ոչ ալկոհոլային ըմպելիքներ. լիմոնադների համար նախատեսված օշարակներ. ըմպելիքների համար նախատեսված օշարակներ. սմուզիներ (մրգերի կամ բանջարեղենի խառնուրդների հիմքով ըմպելիքներ). բանջարեղենային հյութեր (ըմպելիքներ). մրգային հյութեր. տոմատի հյութ (ըմպելիք). խնձորի ոչ ալկոհոլային հյութ. գազավորված ջրեր պատրաստելու համար նախատեսված բաղադրանյութեր. լիկյոր պատրաստելու համար նախատեսված բաղադրանյութեր. հանքային ջուր պատրաստելու համար նախատեսված բաղադրանյութեր. ըմպելիքներ պատրաստելու համար նախատեսված բաղադրանյութեր. քաղցրահյութեր. չֆերմենտավորված խաղող-

ղահյուս. գարեջրի քաղցրահյութեր. ածիկի քաղցրահյութեր. գազավորված ըմպելիքներ պատրաստելու համար նախատեսված հաբեր. շերբեթ (ըմպելիք). մրգային ոչ ալկոհոլային էքստրակտներ. գարեջրի պատրաստման համար նախատեսված հմուլի էքստրակտներ. ըմպելիքների պատրաստման համար նախատեսված էսենցիաներ.

դաս 33. ալկոհոլային ըմպելիքներ (բացառությամբ գարեջրի). ապերիտիվներ. արմավօղի. բրենդի. գինիներ. խաղողի մզվածքից պատրաստված գինի. վիսկի. օղի. անիսոնի օղի. բալի օղի. ջին. մարսողությանը նպաստող, ճաշից հետո մատուցվող ալկոհոլային խմիչքներ (լիկյորներ և սպիրտային ըմպելիքներ). կոկտեյլներ. կյուրասառ. անիսոնի լիկյոր. լիկյորներ. խառը ալկոհոլային ըմպելիքներ (բացառությամբ գարեջրի հիմքով ըմպելիքների). մրգեր պարունակող ալկոհոլային ըմպելիքներ. թորման միջոցով ստացված ըմպելիքներ. սպիրտային ըմպելիքներ. մեղրային ըմպելիք (մեղրասպիրտ). անանուխի ոգեթուրմ. դառնահամ ոգեթուրմեր. նիռա (շաքարեղեգի հիմքով ալկոհոլային ըմպելիք). ռոմ. սակե. սիդրներ. բրնձի սպիրտ. սպիրտային էքստրակտներ. մրգային սպիրտային էքստրակտներ. սպիրտային էսենցիաներ:
(740) Զարուհի Մանուկյան

(210) 20131268 **(111) 21694**
(220) 24.09.2013 **(151) 02.08.2014**
 (181) 24.09.2023

(730) ՀՀ ԱԱՊ «Արմէքսպերտիզա» ՍՊԸ, Երևան, Գ. Նժդեհ 26, AM
(442) 18.10.2013
(540)



(511)
դաս 36. անշարժ և շարժական գույքի գնահատում.

դաս 37. շինարարության որակի տեխնիկական հսկողություն.

դաս 42. ապրանքների ծագման փորձաքննություն, ԱՏԳԱԱ (արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ) ծածկագրերի փորձաքննություն, ապրանքների որակի, քանակի և համալրիվության փորձաքննություն:

(210) 20131315 **(111) 21695**
(220) 30.09.2013 **(151) 02.08.2014**
 (181) 30.09.2023

(730) Ինթեքս Էնթըրփրայզիս Փրայվիթ Լիմիթեդ, IN
(442) 06.11.2013
(540)

INTEX

(511)
դաս 9. բջջային (շարժական) հեռախոսներ, սմարթֆոններ և դրանց պիտույքներ. համակարգիչներ, պլանշետային համակարգիչներ և դրանց պիտույքներ. համակարգչային ծրագրային ապահովում. բարձրախոսներ, ականջակալներ. երաժշտական նվագարկիչներ. կուտակիչներ և բարձրացնող տրանսֆորմատորներ. հեռուստացույցեր. համակարգիչների մոնիտորներ. ցանցի մուտքի սերվերի ծրագրային և սարքավորանքի ապահովում. տպիչներ համակարգիչների համար. հեռուստաընդունիչներ և մալուխային հեռուստատեսության ալիքների կողագերծիչներ. կերպավորիչներ.

դաս 42. համակարգիչների նախագծման հետ կապված խորհրդատվություն. համակարգչային սարքավորանքի և ծրագրային ապահովման հետազոտում և մշակում. համակարգչային ծրագրերի կազմում և մշակում. էլեկտրոնային համակարգչային հայտարարությունների տախտակի մուտքի ապահովում ու վարձակալություն. ծրագրային ապահովման արդիականացում. համակարգչային ժամանակի համատեղ օգտագործման ծառայություններ. համակարգիչների վարձույթ և վարձակալություն.

վիճատություն. համակարգչային ավտոմատացված նախագծման և ինժեներատեխնիկական ծառայություններ. համակարգչային համակարգերի վերլուծություն. համակարգչային ծրագրավորման ծառայություններ. մուլտիմեդիայի և (կամ) ինտերակտիվ արտադրանքի համակարգչային ծառայություններ. համակարգչային տվյալների բազաների տրամադրում:

(740) Արարատ Գալոյան

(210) 20131516 (111) 21696
(220) 31.10.2013 (151) 02.08.2014
(181) 31.10.2023

(730) Էքսփորթադորա Յունիֆրուտի Թբիլիսի
Լիմիթադա, CL
(442) 04.02.2014
(540)



(591) Ապրանքային նշանը պահպանվում է կապույտ, կարմիր և սպիտակ գունային համակցությամբ:

(511)

դաս 31. հացահատիկ, գյուղատնտեսական, այգեգործական, անտառային և հացահատիկային մթերքներ, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. կենդանիներ. թարմ մրգեր և բանջարեղեն. սերմեր, բնական բույսեր և ծաղիկներ. կեր կենդանիների համար. ածիկ:

(740) Արարատ Գալոյան

(210) 20131571 (111) 21697
(220) 13.11.2013 (151) 02.08.2014
(181) 13.11.2023

(730) Սամսունգ Ք ընդ Թ Քորփորեյշըն, KR
(442) 20.02.2014

(540)



(511)

դաս 35. լոյալության ծրագրերի կառավարում, որն առաջարկվում է վերավաճառողներին, առևտրի գործակալներին և դիստրիբյուտորներին՝ տալով նրանց արտոնություններ, պարգևատրումներ և զեղչեր:

(740) Արարատ Գալոյան

(210) 20131623 (111) 21698
(220) 26.11.2013 (151) 02.08.2014
(181) 26.11.2023

(730) Գոսուդարստվեննայա Կորպորացիա Պո Ատոմնոյ Էներգիի «Ռոսատոմ», RU

(442) 20.02.2014
(540)



POCATOM

(591) Ապրանքային նշանը պահպանվում է սպիտակ, կապույտ, մուգ կապույտ, երկնագույն, մոխրագույն, մուգ մոխրագույն և սև գունային համակցությամբ:

(511)

դաս 1. ամերիցիում. տրոհվող նյութեր միջուկային էներգիա ստանալու համար. նեյտրոններ կլանող նյութեր, մասնավորապես՝ բոր, կադմիում, արծաթ. գադոլինիում. գալիում. գազակլանիչներ. գրաֆիտ արդյունաբերական նպատակների համար. գրաֆիտե փշրանք՝ ընդգրկված 1-ին դասում, կալցիումամազնեզիումային համահալվածք. տիտանի երկօքսիդ. ցիրկոնիումի երկօքսիդ.

տիտանի երկօքսիդ արդյունաբերական նպատակների համար. ցիրկոնիումի երկօքսիդ. ուրանի երկօքսիդ. դանդաղարարներ միջուկային ռեակտորների համար. նեյտրոնների դանդաղարարներ, մասնավորապես՝ քիմիական բաղադրություններ, որոնք օգտագործվում են դրանց միջով անցնող նեյտրոնների էներգիայի նվազեցման համար՝ նեյտրոնների հայտնաբերմանը նպաստելու նպատակով. իզոտոպներ արդյունաբերական նպատակների համար (այդ թվում՝ աղբյուրներ դրանց հիման վրա, իզոտոպներ հազվագյուտ հողի մետաղներից). կալիֆոռնիում. կարբիդներ. կատալիզատորներ. սիլիցիում (այդ թվում՝ եռաքլորսիլան). գտող նյութեր (քիմիական նյութեր). թունավոր գազերի չեզոքարարներ. ուրանի նիտրատ. ալյումինի օքսիդ. ուրանի օքսիդ. կոբալտի օքսիդներ. մաքրող միջոցներ արդյունաբերական նպատակների համար. պլուտոնիում. մակերևութային ակտիվ նյութեր. կենսաբանական պատրաստուկներ, բացառությամբ բժշկական և անասնաբուժական նպատակների համար օգտագործվողների. պատրաստուկներ բույսերի աճը կարգավորելու համար. բնական և հարստացված ուրան և արգասիքներ ուրանից (ծուլազանգվածներ, փոշիներ, ուրանի օքսիդ, քառաֆտորիդ. ուրանի հեքսաֆտորիդ, ուրանի օքսիդ-ենթօքսիդ, ֆտորաջրածնային թթու, անջուր ֆտորային ջրածին). ռադոն. տրոհվող քիմիական տարրեր. հազվագյուտ հողի մետաղներ (հոլմիում, դիսպրոզիում, եվրոպիում, իտերբիում, իտրիում, լանթան, նեոդիմ, պրազեոդիմ, սամարիում, սկանդիում, տերբիում, թուլիում, ցերիում, էրբիում). սնդիկ. ազնիվ մետաղների աղեր արդյունաբերական նպատակներով օգտագործելու համար. ոսկու աղեր. հազվագյուտ հողի մետաղների աղեր. ալկալիական մետաղների աղեր (ֆտոր, ցիրկոնատ, կալիում). հրակայուն բաղադրություններ. հեղուկ ապակի (լուծվող). թալիում. վառելիք ատոմային ռեակտորների համար. ածխածին. պարարտանյութեր. ֆոսֆոր. քիմիական նյութեր մետաղների միմյան և զոդման համար. քիմիական նյութեր միջուկային ռեակցիաների դեպքում որպես տրոհիչ օգտագործելու համար. քիմիական նյութեր ջրի մաքրման համար. քիմիական նյութեր, արգասիքներ, պատրաստուկներ

և բաղադրություններ, մասնավորապես՝ լուծիչներ, էքստրագենթներ, կոմպլեքսանթներ, խեժեր, ազոտային, ծծումբային և ֆտորաջրածնային միացություններ, սոդա, ամոնիում, օքսիդարարներ և թուլացուցիչներ՝ նախատեսված ատոմային արդյունաբերության և էներգետիկայի համար. քիմիական նյութեր արդյունաբերական և գիտական նպատակներով օգտագործման համար, ներառյալ՝ հազվագյուտ հողեր, վանադիումի օքսիդ, ամորֆ կվարց, լեգիրած սիլիցիում, կայուն և ճառագայթաակտիվ իզոտոպներ, ուլտրամաքուր նյութեր. կալցիումի քլորիդներ. հողալկալիական մետաղներ (բարիում, տելուր, լիթիում, լիթիումի օքսիդի հիդրատ, ռուբիդիում, ստրոնցիում, ցեզիում). ճառագայթաակտիվ տարրեր գիտական նպատակների համար, դրանց բաղադրություններ և համահավաքներ. միջուկային վառելիքի տարրեր, որոնք պարունակում են տրոհվող նյութերով հաբեր.

դաս 2. հակակոռոզիական պատրաստուկներ. պաշտպանական պատրաստուկներ մետաղների համար. ներկեր. ներկող նյութեր. լաքեր. լաքաներկային պատվածքներ.

դաս 4. յուղեր, քսուքներ և քսանյութեր, որոնք նախատեսված են օգտագործելու ատոմային արդյունաբերության և էներգետիկայի մեջ. վառելիք (այդ թվում՝ շարժիչային բենզին) և լուսավորության նյութեր. էլեկտրական էներգիա.

դաս 5. ճառագայթաակտիվ նյութեր բժշկական նպատակների համար. իզոտոպներ բժշկական նպատակների համար (այդ թվում՝ աղբյուրներ դրանց հիմքի վրա). բժշկական վիրակապման նյութեր. վիրաբուժական վիրակապման նյութեր. կենսաբանական պատրաստուկներ բժշկական նպատակների համար. ռադիոմ բժշկական նպատակների համար. ճառագայթաակտիվ դեղագործական պատրաստուկներ և ոչ ճառագայթաակտիվ ռեակտիվներ ռադիոդեղագործական միջոցների արտադրանքի համար ախտորոշման կամ թերապևտիկ նպատակներով կենդանի օրգանիզմում օգտագործման համար. ռադոնային պինդ խտանյութեր բուժական (բժշկական) նպատակների համար. միջոցներ և պատրաստուկներ բժշկական ռադիոլոգիայի բնագավառում օգտագործման համար. վիրալաթեր.

դաս 6. սովորական մետաղներից և դրանց համահավաճքներից պատրաստված իրեր, բացառությամբ ուրիշ դասերում նախատեսվածների. մանգան. մետաղական բեռնարկղեր. մետաղաճոպաններ և երկաթալար ատոմային արդյունաբերության և էներգետիկայի համար. փոշենման մետաղներ. նիկել. սովորական մետաղներ և դրանց համահավաճքներ. մետաղական խողովակների տեսքով փոշենման երկաթալար պողպատի լեգիրացման համար. մամլակաղապարներ. հաֆնիումի և դրա համահավաճքներից գլոցվածք. նիոբիումի գլոցվածք. ցիրկոնիումի համահավաճքների գլոցվածքներ. տիտանի և դրա համահավաճքների գլոցվածքներ. մետաղական հանքաքար (այդ թվում՝ ուրանային հանքաքար). նիոբիումից և տիտանից համահավաճքներ. ցիրկոնիումի համահավաճքներ. լեգիրացված պողպատ. տանտալ. խողովակներ (միջուկային ռեակտորի տեխնոլոգիական անցուղիներ). դժվարահալ մետաղներ (բերիլիում, վանադիում, վոլֆրամ, հաֆնիում, գերմանիում, ինդիում, մոլիբդեն, նիոբիում, տիտան, ցիրկոնիում). քրոմ.

դաս 7. պոմպեր մեքենաների համար. փականներ արդյունաբերական սարքավորանքի համար. փականներ (մեքենաների մասեր). էլեկտրական գեներատորներ. շարժիչներ, բացառությամբ տրանսպորտային միջոցների համար նախատեսվածների. ճնշման փականներ (մեքենաների մասեր). փականներ ատոմակայանների և նավերի համար. մեքենաներ, մասնավորապես՝ միջուկային սարքվածքների ապակտիվացման և ապատեղակայման համար. մետաղահատ հաստոցներ. պոմպեր, մասնավորապես՝ կենտրոնախույս պոմպեր, ատոմային արդյունաբերության և էներգետիկայի համար. հորատող մեքենաներ (այդ թվում՝ հորատիչներ հորատանցքի պատի ծակոտման համար). գայլիկոնիչ հաստոցներ մետաղների մշակման համար. հաստոցներ մետաղամշակման արդյունաբերության համար. տուրբիններ ատոմային արդյունաբերության և էներգետիկայի մեջ օգտագործման համար. կենտրոնախուսակ մեքենաներ ատոմային արդյունաբերության և էներգետիկայի մեջ օգտագործման համար, այդ թվում՝ գազային կենտրոնախուսակ մեքենա-

ներ, կենտրոնախուսակ մեքենաներ ուրանի հարստացման և իզոտոպների բաժանման համար. էլեկտրաշարժաբերներ.

դաս 9. ապարատուրաներ ծայնի, պատկերի և այլ տվյալների գրառման, հաղորդման, մշակման ու արտաբերման համար. հաշվիչ մեքենաներ, սարքավորանք տվյալների մշակման համար և համակարգիչներ. համակարգչային ծրագրեր և համակարգչային ծրագրային ապահովում ատոմային արդյունաբերության և էներգետիկայի բնագավառում օգտագործման համար. համակարգչային ծրագրեր ձեռնարկությունում արտադրության գործընթացի մոնիտորինգի և վերահսկման համար. էլեկտրամագնիսներ. էլեկտրոնային և օպտիկական ապարատուրա և գործիքներ, ինչպիսիք են՝ համակարգիչներ և տեսամոնիտորներ, կշեռքներ, անկյունաչափեր, լազերներ, դյուրակիր չափիչներ և չափող ժապավեններ ատոմային էներգետիկայի, մասնավորապես՝ ատոմային էներգիայի արտադրման, և միջուկային վառելիքային ցիկլի, միացիչների ու էլեկտրոնիկայի բնագավառում արտադրական նշանակության կառույցներում ֆիզիկական և երկրաչափական պարամետրերի ստուգման, վերահսկման, կշռման և չափման համար. էլեկտրոնային կիսահաղորդիչներ. սարքավորանքներ ճառագայթակաթիլ նյութերով աղտոտված էլեկտրակայանների մասերի վարակազերծման համար. սարքավորանքներ էլեկտրակայաններում նյութերի ոչ կործանարար փորձարկման համար. մանրասխեմաներ. մագնիսական լարեր, որոնք օգտագործվում են էլեկտրամագնիսների պատրաստման համար. մագնիսներ արդյունաբերական նպատակով օգտագործման համար. քվանտային խառնուկներ, մասնավորապես՝ բյուրեղային կիսահաղորդիչ նյութեր. գիտական, օպտիկական, կշռային, չափիչ, ստուգող, վերահսկող, տեղագրական, դետեկտորական (որևէ բան, ազդանշան և այլն ֆիքսող), փորձարկող, վերլուծող և տեղեկատվական ապարատուրա և գործիքներ, մասնավորապես՝ արդյունաբերական օբյեկտների, էլեկտրական կայանների, ատոմային պահեստների, միջուկային վառելիքի արտադրման համար սարքավորանքի, միջուկային վառելիքի

վերամշակման համար սարքավորանքի, միջուկային վառելիքի պահպանման համար սարքավորանքի և մնացուկների պահպանման համար սարքավորանքի շինարարության, սպասարկման, օգնության, շահագործումից դուրս հանման և վերանորոգման օգտագործման համար՝ գիտական հետազոտություններում, արդյունաբերական հետազոտություններում, նոր արտադրանքի հետազոտության ու մշակման և նյութերի փորձարկման մեջ կիրառման համար. կիսահաղորդիչ ինտեգրալային սխեմա. կիսահաղորդիչ սարքեր. հիշողության կիսահաղորդիչ քարտեր. կիսահաղորդիչներ. սիլիցիումային թիթեղներ. կառուցվածքավորած կիսահաղորդիչ թիթեղներ. գերհաղորդիչ ժապավեններ. գերհաղորդիչ լարեր և մալուխներ. գերհաղորդիչներ. թեստային և չափիչ սարքավորանքներ՝ էլեկտրակայանների սարքավորանքի արտադրողականության և արդյունավետության թեստավորման համար. էլեկտրական կուտակիչներ. ԱԷԿ-ում ճառագայթային իրադրության վերահսկման ավտոմատացված համակարգերի ապարատուրա (սարքեր). ԱԷԿ ռեակտորի նեյտրոնային հոսքի վերահսկման ապարատուրա (սարքեր). ատոմային էլեկտրակայաններում ճառագայթային անվտանգության վերահսկման ապարատուրա (սարքեր). ԱԷԿ թերմոստատների վերահսկման արդյունքների պատկերման և արձանագրման ապարատուրա (սարքեր). ազդանշանների հեռակառավարման էլեկտրադինամիկ ապարատուրա. ռենտգենյան ճառագայթման համար ապարատուրա և գործիքներ, բացառությամբ բժշկության մեջ օգտագործվողների, մասնավորապես՝ բարձր էներգիայով ռենտգենյան ճառագայթում ստանալու և ռենտգենյան պատկերների համար լիցքավորված մասնիկների գծային ուժեղարարներ՝ ստուգման, նյութերի փորձարկման, արդյունաբերական օգտագործման և անվտանգության նպատակներով օգտագործման համար. ճառագայթիչ վերահսկման ապարատուրա և սարքավորանք. ռադիոլոգիական ապարատուրա արդյունաբերական նպատակների համար. ֆիզիկական, էլեկտրական ապարատուրա ատոմային արդյունաբերության և էներգետիկայի համար. կուտակիչների բանկաներ,

կուտակիչի մարտկոցներ. գալվանական տարրերի մարտկոցներ. բետատրոններ. գազաանալիզարարներ (գազավերլուծիչներ). կյանքի կարճ տևողությամբ իզոտոպների գեներատորներ. տվիչներ ատոմային արդյունաբերության և էներգետիկայի համար. օդի և գազի համար օդափոխիչներ պարունակող ճառագայթման դետեկտորներ. բաժնաչափիչներ. կուտակիչների պատյաններ. լազերներ, բացառությամբ բժշկական նպատակներով օգտագործվողների. էլեկտրոնային տեխնիկայի համար նյութեր և կիսարտադրանքներ. միաբյուրեղներ. լիցքավորված մասնիկների ուժեղարարների հիման վրա նեյտրոնային գեներատորներ. լաբորատորիաների հատուկ սարքավորանք. ճառագայթահարումից պաշտպանող հագուստ, կոշիկեղեն, գլխարկներ, սաղավարտներ, դիմակներ. կուտակչային թիթեղներ. դժբախտ դեպքերից և վնասվածքներից պաշտպանող հագուստի պարագաներ ռադիոակտիվ նյութերի հետ աշխատելու ժամանակ ճառագայթահարումը կանխարգելելու համար. նախաուժեղարարներ (էլեկտրոնային սարքեր). միջուկային ճառագայթների գրանցման և չափման սարքեր, այդ թվում՝ դետեկտման բլոկներ. չափիչ սարքեր, այդ թվում՝ չափիչ էլեկտրական սարքեր. ռադարներ. ռադիոլոգիական գործիքներ, մասնավորապես՝ բարձր էներգիայով ռենտգենյան ճառագայթում ստանալու և ռենտգենյան պատկերների համար լիցքավորված մասնիկների գծային ուժեղարարներ՝ գործածման, ստուգման, նյութերի փորձարկման, արդյունաբերական օգտագործման և անվտանգության նպատակներով օգտագործելու համար. ճառագայթաչափեր. ռադիոսարքեր. ռենտգենյան ապարատներ, բացառությամբ բժշկական նպատակների համար օգտագործվողների. կուտակիչների ցանցեր. ատոմային էլեկտրակայանների կառավարման և վերահսկման համակարգեր. սոնարներ. սպեկտրաչափեր. տեխնոլոգիական սարքավորանք և (կամ) չափիչ սարքեր նյութերի փորձարկման իրականացման համար դրանց հատկությունների մասին տեղեկություն ստանալու նպատակով. մասնիկների ուժեղարարներ. արտադրական

գործընթացների հեռակառավարման տեղակայանքներ արդյունաբերական ձեռնարկություններում. ծածկույթների փոշեպատման սարքավորանք. ջերմամիջուկային սինթեզի կառավարման սարքավորանք. կոռոզիայից պաշտպանող սարքեր, այդ թվում՝ կաթոդային. ազդասարքեր (պահպանական ազդանշանում). ցիկլոտրոններ. ռենտգենյան ապարատների էկրաններ արդյունաբերական նպատակների համար. գալվանական տարրեր.

դաս 10. էլեկտրամագնիսական բժշկական ախտորոշիչ սարքեր պատկերի ձևավորման համար. ապարատուրա բարձր հաճախականության էլեկտրամագնիսական թերապիայի համար. լազերներ բժշկական և վիրաբուժական նպատակների համար. ցածր հաճախականության էլեկտրամագնիսական թերապիայի ապարատ. մագնիսական ռեզոնանսային տոմոգրաֆիայի ախտորոշիչ ապարատներ. բժշկական ապարատուրա և գործիքներ, որոնք գործածվում են պոզիտրոնաէմիսիոն տոմոգրաֆիայի անցկացման համար. բժշկական սարքավորանք, մասնավորապես՝ համակարգչային տոմոգրաֆիայի համար սարքավորանք. ախտորոշիչ սարքեր պատկերի ձևավորման համար, որոնք գործածվում են միջուկային բժշկության մեջ. միջուկի սպինային տոմոգրաֆներ բժշկական նպատակների համար. բժշկական նպատակներով օգտագործվող ճառագայթաբուժության համար սարքավորանք. ռենտգենյան խողովակներ բժշկական նպատակների համար. ռենտգենյան ապարատներ բժշկական նպատակների համար. գծային ուժեղարարներ՝ ճառագայթման եղանակով չարորակ ուռուցքների բուժման համար. բժշկական սարքեր (այդ թվում՝ սարքեր ռադոնային պինդ խտահանք պատրաստելու համար) և գործիքներ. էլեկտրամագնիսական բժշկական սարքեր. բժշկական ռադիոլոգիական սարքավորանք. վիրաբուժական, բժշկական, ատամնաբուժական և անասնաբուժական սարքեր և գործիքներ. վերջավորությունների պրոթեզներ, ոսկրաբուժական իրեր. հարմարանքներ ռենտգենյան ճառագայթներից պաշտպանվելու համար.

դաս 11. օդի ֆիլտրման տեղակայանքներ միջուկային արդյունաբերության մեջ օգտա-

գործելու համար. ապարատուրա և գործիքներ, որոնք օգտագործվում են ատոմային արդյունաբերության և էներգետիկայի բնագավառներում, մաքրման, բաշխման և հեղուկների ու գազերի մաքրման նպատակներով օգտագործելու համար. ֆիլտրեր և զտող հարմարանքներ օդի և գազի լավորակման համար. միջուկային գեներատորներ. միջուկային էներգետիկ տեղակայանքներ. ջրի զտման համար սարքեր. ջրի զտման համար տեղակայանքներ միջուկային արդյունաբերության և էներգետիկայի մեջ օգտագործելու համար. հետազոտական միջուկային ռեակտորներ. համալրող դետալներ միջուկային ռեակտորների համար. մոդուլային միջուկային տեղակայանքներ, ներառյալ՝ վառելիքային, շոգու գեներատորներ, ռեակտորի պատյաններ, միջուկային ռեակտորի պատյանների խուփեր, ռեակտորի ներքին մասեր, կառավարող միջուկի հաղորդաշարժիչ մեխանիզմ. միջուկային ռեակտորներ. լուսադիոդային լամպեր. տեղակայանքներ միջուկային թափոնների և գործածած վառելիքի սառեցման համար. տեղակայանքներ միջուկային վառելիքի, միջուկային դանդաղարարների և միջուկային թափոնների վերամշակման համար. կենցաղային կամ արդյունաբերական տեղակայանքների զտիչներ, այդ թվում՝ միջուկային նյութերի վերացման համար.

դաս 12. ցամաքային, օդային և ջրային տրանսպորտային միջոցներ, մասնավորապես՝ օդային բարձիկներով ապարատներ, թռչող ապարատներ, ինքնաթիռներ (օդանավեր), բեռների փոխադրման համար ամենագնաց ինքնաշարժ թրթուրավոր տրանսպորտային միջոցներ, երկկենցաղ ավտոմոբիլներ, զրահապատ տրանսպորտային միջոցներ, ավտոմատ կառավարվող տրանսպորտային միջոցներ և դրանց կառուցվածքային մասեր. տիեզերական ապարատներ. էլեկտրաշարժիչներ.

դաս 13. ռազմամթերք և արկեր. պայթուցիկ հարմարանքներ. պայթուցիկ նյութեր. հրազեն.

դաս 14. ազնիվ մետաղներ և դրանց համահալվածքներ, այդ թվում՝ չմշակված կամ դրոշմահատված ոսկի. ազնիվ մետաղների ձուլակտորներ.

դաս 16. գրաֆիկական տպագրական նյութեր և գրաֆիկական պատկերներ, մասնավորապես՝ կոնստրուկտորական գծագրեր, դիզայնական էքզիզներ, նախագծեր, էքզիզներ, լուսանկարներ, նկարազարդումներ. տպագրական և էլեկտրոնային հրահանգներ, մեթոդական և ուսումնական նյութեր ատոմային էներգետիկայի բնագավառում. գրասենյակային պարագաներ, մասնավորապես՝ կաշուն ժապավենի մատուցման հարմարանքներ, հեղուկ ճշտիչներ, գրիչներ, մատիտներ, ռետիններ, ծակոտիչներ (գրասենյակային), կարիչներ, ճարմանդներ. թուղթ, ստվարաթուղթ և դրանցից պատրաստված իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում, մասնավորապես՝ ալբոմներ պիտակների համար, ալբոմներ մետաղադրամների համար, տոնական ալբոմներ, ալբոմներ լուսանկարների համար, հուշալբոմներ, ալբոմներ նամականիշների համար, տպագրական բլանկներ, ծոցատետրեր. տպագրական հրապարակումներ, մասնավորապես՝ նախագծման, կոնստրուկցիայի վերաբերյալ ուղեցույցներ. տեխնիկական ուղեցույցներ, ձեռնարկներ, պարբերական հրատարակություններ ատոմային էներգետիկայի բնագավառում. տպող հարմարանքներ. ալբոմներ, բլանկներ, բլոկնոտներ (նոթատետրեր), բրոշյուրներ. բուկլետներ. թուղթ գրամեքենաների համար. տեղեկագրեր. մոմած թղթեր. ամսագրեր. օրացույցներ. կատալոգային (քարտացուցակային, գրացուցակային) քարտեր. հաշվառման գրանցման քարտեր. կատալոգներ (քարտացուցակներ, գրացուցակներ). ծրարներ. պատճենահանման թուղթ. փաթաթելու թուղթ. թղթագրենական ապրանքներ. ծանուցատետրեր (այդ թվում՝ գովազդային). լուսապատճենահանման թուղթ. տպագրական և էլեկտրոնային ուսումնական նյութեր, իրազնական պիտույքներ (բացառությամբ՝ ապարատորայի), ուսումնական հրապարակումներ ատոմային արդյունաբերության և էներգետիկայի բնագավառում. քամիչ թուղթ. լուսանկարներ. տպատառեր. գծագրության թուղթ.

դաս 17. խճուճման և մեկուսիչ նյութեր. պլաստմասսայե թաղանթներ արդյունաբերական և առևտրական օգտագործման համար. խտացման և մեկուսիչ նյու-

թեր. պլաստմասսաների կիսաֆաբրիկատներ արդյունաբերական նպատակների համար. ջերմամեկուսիչ նյութեր. մեկուսիչ յուղեր. մեկուսիչ ապակեթեթք. ճկուն ոչ մետաղական խողովակներ. ոչ մետաղական խողովակներ՝ ուրանի հանքերի, գործարանների և վառելիքի, հանքանյութերի, միջուկային նյութերի, ուրանի, պլուտոնիումի ու միջուկային թափոնների պահման, պահեստավորման, իզոտոպային բաժանման, մշակման, վերամշակման ու օգտահանման կենտրոնների համար.

դաս 19. շարժական ոչ մետաղական կառուցվածքներ և կառուցվածքներ անվտանգության համակարգերի համար. հավաքովի և շարժական ոչ մետաղական կառուցվածքներ ու ոչ մետաղական շինարարական նյութեր, մասնավորապես՝ ցեմենտից բլոկներ, կղմինդր, դռներ, հենարաններ, սալեր, պանելներ, ուրանի հանքերի խողովակներ՝ միջուկային նյութերի, ուրանի, պլուտոնիումի ու միջուկային թափոնների պահման, պահեստավորման, իզոտոպային բաժանման, մշակման, վերամշակման ու օգտահանման համար. ջրմուղի ոչ մետաղական խողովակներ. խեցեխողովակներ. ոչ մետաղական խողովակներ օդափոխման տեղակայանքների և օդի լավորակիչների համար. ոչ մետաղական կողմնատար խողովակներ.

դաս 35. գովազդ և շուկայագիտություն. ծառայություններ գովազդի բնագավառում, մասնավորապես՝ ապրանքների, ծառայությունների, ֆիրմային խորհրդանիշի և առևտրային տեղեկատվության բնագավառներում, երրորդ անձանց նորությունների առաջխաղացում՝ տպագրական, ծայնային, տեսային, թվային զանգվածային լրատվական միջոցների և իրական ժամանակի ռեժիմում աշխատող զանգվածային լրատվամիջոցների միջոցով. օգնություն և խորհրդատվական ծառայություններ էներգետիկ սեկտորում ընկերությունների կառավարման բնագավառում. կորպորատիվ ծառայություններ, մասնավորապես՝ ատոմային արդյունաբերության և էներգետիկայի արդյունաբերությունների շահերի առաջխաղացում. վարչական գործունեություն գործարարության ասպարեզում և խորհրդատվություն գործարարության

կառավարման հարցերով. վարչական գործունեություն գործարարության և գործավարության ասպարեզում. խորհրդատվություն և օգնություն գործարարության ասպարեզում վարչական գործունեության հարցերով. հարցումներ և հետազոտություններ գործարարության ասպարեզում. շուկայագիտության ծառայություններ գործարարության ասպարեզում. ռազմավարության մշակման ծառայություններ գործարարության ասպարեզում. օգնություն առևտրային ու արդյունաբերական ձեռնարկությունների կառավարման գործում. առևտրային ձեռնարկության կառավարում. օգնություն կորպորացիայի կառավարման գործում. տնտեսական կանխագուշակում և վերլուծություն. արտահանման և ներմուծման գործակալություններ. խորհրդատվություն շուկայագիտության հարցերով. շուկայագիտության պլանի մշակում. շուկայագիտության ծառայություններ, մասնավորապես՝ երրորդ անձանց ապրանքների ու ծառայությունների առաջխաղացում և զովագր. հետազոտություններ շուկայագիտության ասպարեզում. խորհրդատվություն գործարարության կազմակերպման և կառավարման հարցերով. ցուցահանդեսների կազմակերպում առևտրային կամ գովազդային նպատակներով. տեղեկատվության հավաքում և կանոնակարգում տվյալների համակարգչային բազաներից. գործարարական փորձաքննություն.

